

# 

9 հունիսի 2016 թվականի N 612 - U

ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

-----

Հիմք ընդունելով «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

- 1. Հաստատել՝
- 1) ստանդարտների մշակման ծառայությունների 2016 թվականի ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.
- 2) ստանդարտացման 2016 թվականի աշխատանքների ցանկը` համաձայն N 2 հավելվածի։

ՀԱՑԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ԱԲՐԱՀԱՄՑԱՆ

2016 թ. հունիսի 14 Երևան



# 2016 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

### I. ՆԱԽԱՔԱՆ

- 1. Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման և միջազգային ու ԵՏՄ-ի շուկաների հետ ինտեգրման գործընթացում կարևոր է միասնական ներդաշնակ ստանդարտները ոչ միայն կաթանում են միջազգային առևտուրը, այլև նպաստում են համաշխարհային լավագույն փորձի ու գիտելիքի տարածմանը, տնտեսության տարբեր ճյուղերում նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը, էներգախնայողությանը, շրջակա միջավայրի պահպանությանը, գործարարության զարգացմանը, մարդկանց կյանքի ու առողջության անվտանգության ապահովմանը և այլն։
- 2. Հայաստանի ազգային ստանդարտների Ստանդարտների մշակման ծառայությունների 2016 թվականի ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) նախատեսում է մշակել միջազգային և տարածաշրջանային ստանդարտներին ներդաշնակ այնպիսի ազգային ստանդարտներ, որոնք կնպաստեն Հայաստանի Հանրապետության տնտեսության տեխնոլոգիական բազայի արդիականացմանը և նորարարական ենթակառուցվածքի զարգացմանը, ինչպես նաև առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացմանն ու արտահանման ծավալների խթանմանը միջազգային շուկաներում և Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներում։
- 3. Ծրագրի նախագիծը մշակվել է միջազգային և տարածաշրջանային ստանդարտների հետ ազգային ստանդարտների ներդաշնակեցման վերաբերյալ միջազգային և

Հայաստանի Հանրապետության մի շարք իրավական ակտերի և Առևտրի համաշխարհային կազմակերպության Առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացման համաձայնագրի պահանջների կատարումն ապահովելու նպատակով։

- 4. «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը (ամբողջությամբ կատարել է ստանդարտների մշակման աշխատանքները՝ նախատեսված Հայաստանի Հանրապետության ստանդարտացման 2015 թվականի ծրագրով (Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի N 614-Ա որոշում)։
- 5. Մասնավորապես, համաձայն 2015 թվականի ծրագրի, նախորդ տարվա ընթացքում մշակվել է միջազգային և եվրոպական ստանդարտներին ներդաշնակ 56 ազգային ստանդարտ, որոնք ընդունվել են Հայաստանի Հանրապետությունում գործող ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների և աշխատանքային խմբերի կողմից։

### II. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

- 6. Ծրագրի մշակման համար հիմք են ծառայել՝
- 1) «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի փետրվարի 8-ի ՀՕ-21-Ն օրենքը.
- 2) «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի փետրվարի 8-ի ՀՕ-19-Ն օրենքը.
- 3) «Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի փետրվարի 8-ի ՀՕ-20-Ն օրենքը.
- 4) Աոևտրի համաշխարհային կազմակերպության 2002 թվականի դեկտեմբերի 10-ի Աոևտրի տեխնիկական խոչընդոտների համաձայնագրի պահանջները՝ միջազգային և եվրոպական ստանդարտների հետ ազգային ստանդարտների ներդաշնակեցման վերաբերյալ.

- 5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի «Ռազմաարդյունաբերական աշխատանքները համակարգող նորմատիվ տեխնիկական ակտերի մշակման ծրագիրը հաստատելու մասին» N 1255-Ա որոշումը.
- 6) Հայաստանի Հանրապետության նախագահի 2009 թվականի հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» N ՆԿ-97-Ն կարգադրությունը.
- 7) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարությանը հավանություն տալու մասին» N 1693-Ն որոշումը.
- 8) «Էներգախնայողության և վերականգնվող էներգիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-130-Ն օրենքը.
- 9) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի նիստի N 50 արձանագրության 14-րդ կետով հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը.
- 10) Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը հաստատելու մասին» N 836-Ն որոշումը.
- 11) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի նիստի N 51 արձանագրության 17-րդ կետով հավանության արժանացած՝ Գործող քաղաքաշի-նական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի՝ եվրոպական նորմերին համապատասխանեցման առաջնահերթ միջոցառումների ծրագիրը.

- 12) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1522-Ն որոշումը.
- 13) Հայաստանի Հանրապետության 1992 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՕ-43 օրենքը.
- 14) Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 10-ի «Խաղողի հումքով ոգելից խմիչքների մասին» ՀՕ-135-Ն օրենքը.
- 15) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2016 թվականի մարտի 12-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2008 թվականի հոկտեմբերի 6-ի N 778-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» N 139-Ա որոշումը.
- 16) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններից, ստանդարտացման 25 տեխնիկական հանձնաժողովների կողմից ներկայացված առաջարկությունները.
- 17) Միջազգային (ԻՍՕ) և տարածաշրջանային (ՍԵՆ, ՄՏԽ) կազմակերպությունների ստանդարտացման աշխատանքների արդյունքները։

## III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- 7. Ծրագրի նպատակներն են`
- 1) նպաստել միջազգային լավագույն փորձի և գիտելիքների տարածմանը.
- 2) միջազգային և եվրոպական ստանդարտների ներդաշնակեցման միջոցով նպաստել տնտեսության տարբեր ճյուղերում նորագույն տեխնոլոգիաների, նորամուծությունների և լավագույն փորձի ներդրմանը.
  - 3) նպաստել սպառողական շուկայում արտադրանքի անվտանգության ապահովմանը.

- 4) խթանել հայրենական արտադրանքի որակի և մրցունակության բարձրացումը.
- 5) ապահովել տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարումը.
- 6) վերացնել առևտրում առկա տեխնիկական խոչընդոտները.
- 7) ապահովել սպառողների շահերի պաշտպանությունը և սպառողական իրազեկության բարձրացումը տեխնիկական կանոնակարգման ենթակա ոլորտներում
- 8) Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների ապահովում.
- 9) Հայաստանի Հանրապետության օրենսդիր և պետական կառավարման մարմիններն ու կազմակերպություններն ապահովել լավագույն փորձի ու գիտելիքի վրա հիմնված նորմատիվ-տեխնիկական բազայով՝ որոշումների ընդունման գործընթացին աջակցելու և Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման համար կիրառելու նպատակով։
  - 8. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են`
  - 1) ազգային ստանդարտների մշակում և կիրառում
- ա. ոազմաարդյունաբերության համակարգում աշխատանքների կարգավորում և բարելավում,
- բ. շենքերի էներգաարդյունավետության բարելավում և էներգախնայողության ապահովում,
  - գ. տեղեկատվական անվտանգության ապահովում,
  - դ. շինարարական նյութերի և արտադրանքի որակի և անվտանգության ապահովում,
- ե. սննդամթերքի և գյուղատնտեսական արտադրության ոլորտում գործարարների համար բարենպաստ պայմանների ստեղծում՝ արտահանման ծավալներն ավելացնելու համար, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման ապահովում, հայկական կոնյակների և կոնյակների սպիրտների կեղծվածության

բացահայտման մեթոդների, իզոտոպների հարաբերակցության սահմանների որոշում՝ ազգային բանկի ստեղծման նպատակով,

- զ. բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովում,
- է. հավատարմագրման աշխատանքների և համապատասխանության գնահատման մարմինների կարգավորում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և միջազգային պահանջներին համապատասխան,
- ը. արտադրանքի համապատասխանության հավաստման կարգավորում Հայաստանի Հանրապետության և ԵՏՄ-ի օրենսդրությանը համապատասխան,
- թ. սերտիֆիկացման գործընթացում նույնականացման աշխատանքների կարգավորում և բարելավում
- 2) միջազգային ստանդարտներին ազգային ստանդարտների ներդաշնակեցման մակարդակի բարձրացումը կխթանի՝
- ա. նորարական տեխնոլոգիաների ներդրումը Հայաստանի Հանրապետության տնտեսությունում,
  - բ. հայրենական արտադրանքի մրցունակության և շահութաբերության բարձրացումը,
- գ. չհիմնավորված տեխնիկական խոչընդոտների վերացումը՝ ապահովելով ազատ աոևտուր.
- 3) ստանդարտացման միջազգային, տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցություն՝
- ա. ստանդարտացման միջազգային, տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցությունն ու աշխատանքների կազմակերպման ծրագիրը հնարավորություն են տալիս մասնակցելու Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ), Ստանդարտացման եվրոպական կոմիտեի (ՍԵՆ) և ԱՊՀ ստանդարտացման միջպետական խորհրդի, ԵՏՄ-ի ու դրանց ստանդարտացման տեխնիկական հանձնա-

ժողովների աշխատանքներին, կիրառելու այդ կազմակերպությունների կողմից ընդունված ստանդարտները, ներկայացնելու նրանց կողմից մշակված ստանդարտների նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության շահագրգիո մարմինների և Ստանդարտների արգային ինստիտուտի առաջարկությունները՝ դրանով նպաստելով հայրենական արտադրղների կողմից արտադրված ու մատուցված ծառայությունների արտահանմանն ինչպես միջազգային, այնպես էլ տարածաշրջանային (Եվրամիության, ԵՏՄ և ԱՊՀ երկրներ) շուկաներ։ Բացի դրանից, հանդիսանալով միջազգային ստանդարտացման՝ նշված կազմակերպությունների անդամ, Ստանդարտների ազգային ինստիտուտը պարտավոր է մասակից լինել այդ կազմակերպությունների աշխատանքներին և ակտիվորեն մասնակցել հրավիրվող խորհրդակցությունների ու տարեկան վեհաժողովներին։ Այդպիսի մասնակցությունը բարձրացնում է Հայաստանի Հանրապետության հեղինակությունը միջազգային ասպարեզում և ամեն անգամ թույլ է տալիս հիմք դնել տարբեր շահագրգիո կազմակերպությունների հետ նոր շահավետ համագործակցությանն.

- 4) Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքներ՝
- ա. Ստանդարտների ազգային ֆոնդի համալըման ու վարման աշխատանքներն ըստ ծրագրի հնարավորություն են տալիս Հայաստանի Հանրապետությանն ունենալու ազգային ստանդարտների արդիականացված ֆոնդ՝ միջազգային և տարածաշրջանային ստանդարտներին ներդաշնակ,
- բ. 2016 թվականին իրականացվելու են ազգային ֆոնդի համալրման միջոցառումներ, որի արդյունքում ազգային ֆոնդը համալրվելու է շուրջ 1580 միջազգային (ԻՍՕ), 1150 եվրոպական (ԵՆ) և 1500 միջպետական (ԳՕՍՏ) նոր ստանդարտներով։ Այդ նոր ստանդարտները որպես տեղեկատվական ռեսուրս են ծառայում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների,

կազմակերպությունների և շահագրգիո անձանց համար՝ տնտեսության տարբեր ճյուղերում անհրաժեշտ և պահանջված գիտելիքների, տեխնոլոգիաների, կառավարման լավագույն փորձի, խորհրդատվության և ուղեցույցների կիրառման նպատակով։

## IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- 9. Ծրագրի շրջանակներում աշխատանքներն իրականացվելու են հետևյալ սկզբունքների համաձայն`
- 1) ազգային ստանդարտների մշակման, ընդունման և կամավոր կիրաոման գործընթացում բոլոր շահագրգիո կողմերի կամավոր ու հավասար մասնակցության իրավունքի պահպանում.
- 2) շահագրգիո կողմերի փոխհամաձայնության վրա հիմնված ազգային ստանդարտների մշակում և ընդունում.
- 3) ստանդարտացման գործընթացի բոլոր փուլերում աշխատանքների թափանցիկություն և պատշաճ մակարդակով հանրային իրազեկում.
- 4) ստանդարտացման գործընթացում շահագրգիո կողմերի համընդհանուր շահերի նկատմամբ որևէ անձնական շահի գերիշխման կանխարգելում.
- 5) ազգային ստանդարտների համապատասխանություն միմյանց և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը.
- 6) գիտության և տեխնոլոգիայի համաշխարհային նորարարական, առաջադիմական նվաճումների միջազգային (այդ թվում՝ եվրոպական) ստանդարտացման կանոններն ու արդյունքները հաշվի առնելը.
- 7) միջազգային և տարածաշրջանային ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտների մշակում՝ հաշվի առնելով աշխարհագրական, կլիմայական և հիմնարար տեխնոլոգիական բնույթի տարբերությունների առկայությունը.

- 8) գործողության մեջ դրված ազգային ստանդարտների և դրանց փոփոխությունների պատշաճ ծանուցում բոլոր շահագրգիո կողմերին.
- 9) ստանդարտացման աշխատանքների իրականացում՝ տեխնիկական հանձնաժողովների և աշխատանքային խմբերի միջոցով։

## V. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

- 10. Ստանդարտների մշակման ծառայությունների ծրագիրը ձևավորվել է ստանդարտացման ոլորտի շահագրգիռ բոլոր կողմերի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների և ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների առաջարկությունների հիման վրա։ Այն նաև մեծապես հիմնված է Հայաստանի Հանրապետության տնտեսական գերակայությունների, Հայաստանի Հանրապետության տնտեսական գերակայությունների, Հայաստանի Հանրապետության տնտեսական գերակայությունների, իրականացման և միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորություններից բխող պահանջների վրա։
- 11. Ստանդարտացման աշխատանքների ծրագրով նախատեսվում է մշակել ազգային ստանդարտների նախագծեր՝ տնտեսության և արդյունաբերության հետևյալ ոլորտների համար՝
- 1) <u>ոազմաարդյունաբերություն</u>. ռազմաարդյունաբերության ոլորտի իրավական դաշտի կատարելագործման նպատակով ծրագրով նախատեսված է մշակել ռազմաարդյունաբերության ոլորտի ստանդարտներ, որոնց մշակման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1255-Ա որոշումը։ Նշված ստանդարտների ներդրումը և կիրառումը կապահովի ռազմական նշանակություն ունեցող ապարատների, սարքերի, սարքվածքների և սարքավորումների հետևյալ տեխնիկական պահանջների և փորձարկման մեթոդների կարգավորում և բարելավում՝
  - ա. հուսալիության պահանջների,

- բ. մեխանիկական, կլիմայական և կենսաբանական հատուկ միջավայրի և տիեզերական ճառագայթների իոնիզացնող ներգործությունների նկատմամբ դիմացկունության և կայունության,
  - գ. փորձարկումների անցկացման,
  - դ. համապատասխանության գնահատման աշխատանքների,
  - ե. կլիմայական ներգործությունների նկատմամբ կայունության գնահատման,
- զ. իոնիզացնող և էլեկտրամագնիսական ճառագայթների ներգործությունների նկատմամբ ամրության գնահատման մեթոդների,
  - է. պահպանման պայմանների,
  - ը. լաքաներկային պատվածքների,
  - թ. մուտքային վերահսկողության,
  - ժ. էլեկտրական մոնտաժի.
  - ժա. կիսահաղորդչային էլեկտրասարքավորումների,
  - ժբ. նորոգման և շահագործման,
  - ժգ. ռազմամթերքի պահպանման.
- 2) քաղաքացիական պաշտպանություն քաղաքացիական պաշտպանության ոլորտի ստանդարտների մշակումը և ներդրումը կապահովի կենսաբանական գործոններով, ռադիոակտիվ միջոցներով կամ թունավոր նյութերով ախտահարված գյուղատնտեսական կենդանիների սպանդանոցներում, տեխնիկայի, տրանսպորտային միջոցների, կառույցների, պաշտպանական միջոցների, հագուստի և ոտնամանների վարակազերծման, ինչպես նաև ջրամաքրման կայանների աշխատանքի և ջրամաքրման հատուկ ռեժիմների իրականացվող աշխատանքների կարգավորումը և բարելավումը.
- 3) <u>համապատասխանության գնահատում</u>. հավատարմագրման և համապատասխանության գնահատման ոլորտում ստանդարտացման աշխատանքները նախատեսում

են սահմանել կառավարման համակարգերի աուդիտ և սերտիֆիկացում իրականացնող մարմիններին ներկայացվող իրազեկության պահանջներ՝ միջոցառումների կայունության, ակտիվների կառավարման համակարգերի, քիզնեսի շարունակականության, ճանապարհային երթևեկության անվտանգության կառավարման համակարգերի աուդիտի և սերտիֆիկացման համար։ Նախատեսվում է մշակել նաև միջազգային ԻՍՕ/ՏՊ 22003-2013 ստանդարտին ներդաշնակ սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգերի աուդիտ և սերտիֆիկացում իրականացնող մարմիններին ներկայացվող պահանջներ ազգային ստանդարտը։ Նախատեսվում է նաև համապատասխանության հավաստման համակարգի հիմնադրութային ստանդարտների վերանայում, որի հիմնական նպատակն է համապատասխանացնել «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և ԵՏՄ-ի օրենսդրությանը.

- 4) <u>տեղեկատվական տեխնոլոգիաներ</u>. տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգության ոլորտում նախատեսվում է արդի միջազգային ստանդարտներին համապատասխան սահմանել տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգերի աուդիտ և սերտիֆիկացում իրականացնող մարմիններին ներկայացվող պահանջներ.
- 5) <u>էներգախնայողություն և էներգաարդյունավետություն</u>. Նշված ոլորտում նախատեսվում է մշակել ազգային ստանդարտներ, որոնք սահմանում են արևային ջրատաքացուցիչ և համակցված համակարգերին ներկայացվող ընդհանուր պահանջներ՝ միջազգայինին ներդաշնակ, ավտոնոմ ֆոտոէլեկտրական համակարգերի աշխատունակության գնահատման մեթոդները, էներգիայի արդյունավետության և վերականգնող էներգիայի աղբյուրների վերաբերյալ հայերեն միասնական տերմինները.
- 6) <u>շինարարություն և շինանյութերի արտադրություն</u> քաղաքաշինության ոլորտում նախատաեսվում է մշակել ստանդարտներ շենքերի էներգաարդյունավետության և էներգախնայողության վերաբերյալ ստանդարտներ, որոնք սահմանում են շենքերի

էներգետիկ բնութագրերի կարգավորման ուղիներ, շինարարական նյութերի և արտադրատեսակների ջերմային հատկությունների հայտարարված և հաշվարկային արժեքների որոշման մեթոդիկաների և հաշվարկային արժեքների սահմանում

- 7) <u>առողջապահություն</u>. առողջապահության ոլորտում նախատեսվում է ստանդարտների մշակման միջոցով կարգավորել բժշկական արտադրանքի մանրէազերծման գնահատումը, բարելավել ջրի մեջ քիմիական տարրերի որոշման արդյունավետությունը, ինչպես նաև մշակել ընդհանուր ընթացակարգ սննդային միջավայրի վրա ցանքի մեթոդով աճեցրած միկրոօրգանիզմների հաշվարկի վերաբերյալ, բնական և օրգանական կոսմետիկական բաղադրամասերի չափանիշների կարգավորում։
- 8) սննդամթերքի արտադրություն. ծրագրով նախատեսված է ազգային ստանդարտների մշակում ազգային պանիրների տեսակների վերաբերյալ, որոնք կսահմանեն միասնական որակական պահանջներ բոլոր արտադրողների համար, կենդանական և բուսական ճարպերում և յուղերում ճարպային թթուների, մեթիլային եթերների որոշման մեթոդի արդիականացում, հայկական կոնյակների և կոնյակների սպիրտների կեղծվածության բացահայտման մեթոդների, այդ թվում՝ խաղողագործական արտադրանքի նմուշառման կարգի մշակում, հայկական կոնյակներում և կոնյակի սպիրտներում այլ ծագման (ոչ խաղողի հումքով ստացված) սպիրտների առկայության և դրանց քանակական որոշման, իզոտոպային բաղադրության հարաբերակցության սահմանների որոշում (Խաղողի և գինու միջազգային կազմակերպության (OIV) մեթոդներին ներդաշնակ)՝ տվյալների ազգային բանկի ստեղծման նպատակով.
- 9) <u>կատավարման համակարգեր</u>. Հայաստանի Հանրապետությունում գործող որակի և շրջակա միջավայրի կատավարման համակարգերի ստանդարտները ենթակա են վերանայման՝ հաշվի առնելով, որ սահմանված են միջազգային նոր պահանջներ, ինչպես նաև նախատեսվում է մշակել մասնագիտական առողջության և անվտանգության կառա-

վարման համակարգերին կառավարման համակարգերի, քաղաքային ծառայությունների և կյանքի որակի բարելավման ցուցանիշների ազգային ստանդարտներ.

- 10) շրջակա միջավայրի պահպանում. բնապահպանական աշխատանքների իրականացման ժամանակ շրջակա միջավայրի որակի լիարժեք մոնիթորինգ իրականացնելու համար ջրի նմուշառման գործընթացում նմուշների պահպանման և վարվելու կանոնների սահմանում, ինչպես նաև ջրում քիմիական տարրերի որոշման արդյունավետության բարձրացում։
- 12. Միջազգային ու տարածաշրջանային ստանդարտացման համագործակցության ընդլայնումը՝
- 1) Ստանդարտների ազգային ինստիտուտը 1997 թվականից Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՄՕ) լիիրավ և 2007 թվականից Ստանդարտացման եվրոպական կոմիտեի (ՄԵՆ) գործընկեր և 2008 թվականից՝ միացող անդամ է։ Մասնակցում է Ստանդարտացման միջազգային կազմակերպության 46 տեխնիկական հանձնաժողովի 18 ենթահանձնաժողովի և 3 քաղաքականության մշակման հանձնաժողովի, Ստանդարտացման եվրոպական կոմիտեի 3 հանձնաժողովի աշխատանքներին։ Միջազգային ու եվրոպական ստանդարտների նախագծերի քննարկման կարևորագույն փուլերում ինստիտուտի մասնակցությունն ակտիվացնելու նպատակով անհրաժեշտ է նշված հեղինակավոր կազմակերպությունների ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների մասնակցության ընդլայնում։ Հաշվի առնելով երկրի տնտեսության զարգացման գերակա ուղղությունները` անհրաժեշտ է ակտիվացնել միջազգային ստանդարտացման աշխատանքները տնտեսության այդ ոլորտներն ընդգրկող տեխնիկական հանձնաժողովներում։ Այս տեխնիկական հանձնաժողովներում աշխատանքների ակտիվացումը կնպաստի միջազգային և եվրոպական ստանդարտների նախագծերի վերաբերյալ մասնագիտական կարծիքի ձևավորմանը, Հայաստանի Հանրապետությունում դրանց կիրառման անհրաժեշտության

հիմնավորմանը։ Միջազգային ու եվրոպական ստանդարտների ընդունման գործընթացում ստանդարտների քննարկման և ընդունման շղթան ամբողջական դարձնելու նկատառումով նախատեսվում է Հայաստանի Հանրապետությունում ստեղծել համանման տեխնիկական հանձնաժողովներ։ Այս ստանդարտացման հանձնաժողովներում իրենց համաձայնությամբ կընդգրկվեն պետական կառավարման, գիտական ինստիտուտների, հասարակական կազմակերպությունների, արտադրական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք կաշխատեն միջազգային ու եվրոպական ստանդարտների նախագծերի փորձաքննության և հանձնաժողովներում դրանց կիրառման հնարավորությունների գնահատման ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում, կմշակվեն այդ ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտներ.

- 2) Հայաստանի Հանրապետությունը 2015 թվականի հունվարի 1-ից անդամակցում է Եվրասիական տնտեսական միությանը, իսկ Ստանդարտների ազգային ինստիտուտն րնդգրկվել է այդ կառույցի տարբեր աշխատանքային խմբերում` որպես ստանդարտացման ազգային մարմին։ Ելնելով նշվածից՝ նախատեսվում է ակտիվացնել Հայաստանի Հանրապետության մասնակցությունը միջպետական ստանդարտացման աշխատանքներում։ Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում ստանդարտացման ոլորտի մասնագետների մասնակցությունը ԱՊՀ ՍՉՍ ՄՊԽ Ստանդարտացման գիտատեխնիկական հանձնաժողովի և ԵՏՄ-ի տարբեր ենթահանձնաժողովների նիստերին։ Համագործակցության սերտացման արդյունքում ինարավոր կլինի Հայաստանի Հանրապետությունում գործողության մեջ դնել և կիրառել Մաքսային միության շուրջ 34 տեխնիկական կանոնակարգերի պահանջներն ապահովող ստանդարտները։
- 13. Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքների կատարելագործում՝

- 1) ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝ ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման համար՝
- ա. ազգային ֆոնդի համալրման, հաշվաոման ու վարման աշխատանքների կազմակերպում և իրականացում,
- բ. ստանդարտների էլեկտրոնային տվյալների բազայի վարում՝ «Ստանդարտ» տեղեկատվական որոնման ավտոմատացված համակարգի միջոցով,
- գ. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններին և կազմակերպություններին ստանդարտների և տեղեկատվության տրամադրման աշխատանքների կազմակերպում,
- դ. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ստանդարտների ամբողջ տեքստի տվյալների բազայի (էլեկտրոնային տարբերակի) ստեղծման, հաշվառման և պահման աշխատանքների կազմակերպում,
- ե. ստանդարտների տվյալների հիմնապաշարից սպառողների (օգտագործողների) օգտվելու հնարավորության և համացանցի միջոցով ստանդարտների էլեկտրոնային վաճառքի մեխանիզմների ներդրում,
- զ. Ստանդարտացման միջազգային կազմակերպության, Ստանդարտացման եվրոպական կոմիտեի, ԵՏՄ-ի և ԱՊՀ Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման Միջպետական խորհրդի շրջանակներում գործող տեղեկատվական համակարգերի ինտեգրման աշխատանքների զարգացում (ստանդարտների էլեկտրոնային տարբերակների ստացում, շահագրգիո կողմերի ապահովում, էլեկտրոնային քվեարկություն և այլն),
- է. Առևտրի համաշխարհային կազմակերպության առևտրում տեխնիկական խոչընդոտների հարցման կետի աշխատանքների իրականացում՝ ըստ պահանջի։

## VI. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

14. «Ստանդարտների ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը վերապահված ծառայությունները ֆինանսավորվում են՝ համաձայն «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի.

15. Ծրագրի իրականացման ֆինանսավորումը հիմնված է Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված «Ստանդարտների մշակման ծառայություններին» հատկացումների գումարով՝ 14.300.0 հազ. դրամ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Հավելված N 2 ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 9-ի N 612 - Ա որոշման

Ց Ա Ն Կ ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

NN ը/կ	Մշակման ենթակա ստանդարտների և աշխատանքների անվանումները	Նպատակը	Պատասխանատու մարմինը	Արդյունքը	Կատարման ժամկետը	2016 թվականի ֆինանսավորումը (հազ. դրամ)				
1	2	3	4	5	6	7				
	1. Ռազմապրդյունաբերություն									
1.1.	Ռազմական նշանակություն ունեցող ապարատներ, սարքեր, սարքվածքներ և սարքավորումներ։ Ընդհանուր տեխնիկական պահանջները, ստուգման և փորձարկման մեթոդներ։ Հուսալիության պահանջները ՀՍՏ Ռ ռազմական ազգային ստանդարտի մշակում	ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1255-Ա որոշման 2-րդ կետի կատարման ապահովում Ռազմաարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ փաստաթղթերի ստեղծում Ռազմական նշանակություն ունեցող ապարատների, սարքերի, սարքվածքների հուսալիության գնահատում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ (համաձայնությամբ)	ստանդարտ	2016 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ				
1.2.	Ռազմական նշանակություն ունեցող ապարատներ, սարքեր, սարքվածքներ և սարքավորումներ։ Ընդհանուր տեխնիկական պահանջները, ստուգման և փորձարկման մեթոդները։ Մեխանիկական, կլիմայական և բիոլոգիական, հատուկ միջավայրի և տիեզերական ճառագայթների իոնիզացնող ներգործությունների նկատմամբ ամրության, դիմացկունության և կայունության պահանջները	ՀՀ կառավարության գսուսանում ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1255-Ա որոշման 2-րդ կետի կատարման ապահովում Ռազմաարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ փաստաթղթերի ստեղծում Ռազմական նշանակություն ունեցող ապարատների, սարքերի, սարքվածքների մեխանիկական, կլիմայական և բիոլոգիական, հատուկ միջավայրի և տիեզերական ճառագայթների իոնիզացնող ներգործությունների նկատմամբ ամրության, դիմացկունության	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ (համաձայնությամբ)	ստանդարտ	2016 թ. ընթացքում	ՀՀ պետական քյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ				
1.3.	Ռազմական նշանակություն ունեցող ապարատներ, սարքեր, սարքվածքներ և սարքավորումներ։ Ընդհանուր տեխնիկական պահանջները, ստուգման և փորձարկման մեթոդները։ Փորձարկումների անցկացման ընդհանուր կանոնները և կազմը	ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1255-Ա որոշման 2-րդ կետի կատարման ապահովում Ռազմաարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ փաստաթղթերի ստեղծում Ռազմական նշանակություն ունեցող	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ (համաձայնությամբ)	ստանդարտ	2016 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ				

1	2	3	4	5	6	7
	ՀՍՏ Ռ ռազմական ազգային ստանդարտի մշակում	ապարատների, սարքերի, սարքվածքների և սարքավորումների փորձարկումների անցկացման կարգավորում				
1.4.	Ռազմական նշանակություն ունեցող ապարատներ, սարքեր, սարքվածքներ և սարքավորումներ։ Ընդհանուր տեխնիկական պահանջները, ստուգման և փորձարկման մեթոդները։ Մեխանիկական ներգործությունների նկատմամբ ամրության, դիմացկունության և կայունության պահանջներին համապատասխանության գնահատման մեթոդները ՀՍՏ Ռ ռազմական ազգային ստանդարտի մշակում	ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1255-Ա որոշման 2-րդ կետի կատարման ապահովում Ռազմաարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ փաստաթղթերի ստեղծում Ռազմական նշանակություն ունեցող ապարատների, սարքերի, սարքվածքների և սարքավորումների նեխանիկական ներգործությունների նկատմամբ ամրության, դիմացկունության և կայունության, դիմացկունության և համապատասխանության գնահատման աշխատանքների կարգավորում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ (համաձայնությամբ)	ստանդարտ	2016 թ. ընթացքում	ՀՀ պետական քյուջե ն ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
1.5.	Ռազմական նշանակություն ունեցող ապարատներ, սարքեր, սարքվածքներ և սարքավորումներ։ Ընդհանուր տեխնիկական պահանջները, ստուգման և փորձարկման մեթոդները։ Կլիմայական ներգործությունների նկատմամբ կայունության պահանջներին համապատասխանելու փորձարկումների մեթոդները  ՀՍՏ Ռ ռազմական ազգային ստանդարտի մշակում	ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1255-Ա որոշման 2-րդ կետի կատարման ապահովում Ռազմաարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ փաստաթղթերի ստեղծում Ռազմական նշանակություն ունեցող ապարատների, սարքերի, սարքվածքների և սարքավորումների կլիմայական ներգործությունների նկատմամբ	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ (համաձայնությամբ)	ստանդարտ	2016 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
1.6.	Դազմական նշանակություն ունեցող ապարատներ, սարքեր, սարքվածքներ և սարքավորումներ։ Ընդհանուր տեխնիկական պահանջները, ստուգման և փորձարկման մեթոդները։ Ավիացիոն տեխնիկայի սարքավորումների փորձարկումների մեթոդիկաները՝ արտաքին մեխանիկական և կլիմայական ներգործությունների դեպքում ՀՍՏ Ռ ռազմական ազգային ստանդարտի	ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1255-Ա որոշման 2-րդ կետի կատարման ապահովում Ռազմաարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ փաստաթղթերի ստեղծում Արտաքին մեխանիկական և կլիմայական ներգործությունների դեպքում ավիացիոն տեխնիկայի սարքավորումների փորձարկումների ապահովում և	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ (համաձայնությամբ)	ստանդարտ	2016 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
1.7.	Դազմական նշանակություն ունեցող ապարատներ, սարքեր, սարքվածքներ և սարքավորումներ։ Ընդհանուր տեխնիկական պահանջները, ստուգման և փորձարկման մեթոդները։ Իոնիզացնող և	ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1255-Ա որոշման 2-րդ կետի կատարման ապահովում Ռազմաարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ	ստանդարտ	2016 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ

1	2	3	4	5	6	7
	Էլեկտրամագնիսական ճառագայթների ներգործությունների նկատմամբ ամրության պահանջներին համապատասխանության գնահատման մեթոդները	փաստաթղթերի ստեղծում Ռազմական նշանակություն ունեցող ապարատների, սարքերի, սարքվածքների և սարքավորումների վրա իոնիզացնող և Էլեկտրամագնիսական ճառագայթների	(համաձայնությամբ)			
	ՀՍՏ Ռ ռազմական ազգային ստանդարտի մշակում	ներգործությունների նկատմամբ ամրության գնահատման բարելավում				
1.8.	ւշագուս Ռազմական տեխնիկա։ Պահպանման պայմաններին ներկայացվող ընդհանուր պահանջները ՀՍՏ Ռ ռազմական ազգային ստանդարտի մշակում	ապության գսառանաան բարվացում ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1255-Ա որոշման 2-րդ կետի կատարման ապահովում Ռազմաարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ փաստաթղթերի ստեղծում Ռազմական տեխնիկայի պահպանման պայմանների կարգավորում և բարելավում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ (համաձայնությամբ)	ստանդարտ	2016 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
1.9.	Ռազմամթերք։ Լաքաներկային պատվածքներ, հերմետիկացնող և կոնսերվացնող նյութեր ՀՍՏ Ռ ռազմական ազգային ստանդարտի մշակում	ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1255-Ա որոշման 2-րդ կետի կատարման ապահովում Ռազմաարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ փաստաթղթերի ստեղծում Լաքաներկային պատվածքների որակի գնահատման բարելավում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ (համաձայնությամբ)	ստանդարտ	2016 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
1.10.	Ռադիոէլեկտրոնային ապարատների և սարքերի էլեկտրական մոնտաժը։ Ընդհանուր տեխնիկական պահանջներ ՀՍՏ Ռ ռազմական ազգային ստանդարտի մշակում	ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1255-Ա որոշման 2-րդ կետի կատարման ապահովում Ռազմաարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ փաստաթղթերի ստեղծում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ (համաձայնությամբ)	ստանդարտ	2016 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
1.11.	Արտադրանքի մուտքային վերահսկողություն։ Ընդհանուր դրույթներ ՀՍՏ Ռ ռազմական ազգային ստանդարտի մշակում	գանությության 2013 թվականի	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ (համաձայնությամբ)	ստանդարտ	2016 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
1.12.	Կիսահաղորդչային ուժային սարքեր։ Ընդհանուր տեխնիկական պայմաններ ՀՍՏ Ռ ռազմական ազգային ստանդարտի մշակում	ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1255-Ա որոշման 2-րդ կետի կատարման ապահովում Ռազմաարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ փաստաթղթերի ստեղծում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ (համաձայնությամբ)	ստանդարտ	2016 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ

1	2	3	4	5	6	7
		Կիսահաղորդչային ուժային սարքերի արտադրության գործընթացում որակի ապահովում				
1.13.	Ռազմական նշանակություն ունեցող օպտիկական սարքեր։ Ժամանակավոր պաշտպանությանը և պահպանությանը ներկայացվող ընդհանուր պահանջները ՀՍՏ Ռ ռազմական ազգային ստանդարտի մշակում	ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1255-Ա որոշման 2-րդ կետի կատարման ապահովում Ռազմաարդյունաբերության աշխատանքները համակարգող նորմատիվ փաստաթղթերի ստեղծում Ռազմական նշանակություն ունեցող օպտիկական սարքերի ժամանակավոր պաշտպանության և պահպանության կարգավորում	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ (համաձայնությամբ)	ստանդարտ	2016 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
